



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(64)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2023

**ԿԱՐԼ ԳՈՒԹՅԿՈՎԻ «ՈԳՈՒ ԱՍՊԵՏՆԵՐԸ» ՎԵՊԸ 19-ՐԴ
ԴԱՐԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածի հիմքում ընկած է 19-րդ դարի ականավոր վիպասան Կարլ Գութեկովի «Ոգու ասպետները» վեպի պոետիկայի ուսումնասիրությունը, մասնավորապես վեպում տեղ գտած նորարարական հնարքների վերհանումը: Հոդվածի նպատակն է առանձնացնել Գութեկովի առաջարկած մի քանի սկզբունքներ, որոնք այնուհետև կիրառելի են դարձել դեռևս 19-րդ դարի սկզբում ծնունդ առած ժամանակի վեպի՝ որպես վեպի նոր տեսակի մյուս այլ հեղինակների կողմից և դրանով հիմք դրել ժամանակի վեպի ավանդույթին:

Հիմնաբառեր՝ ժամանակի վեպ, 19-րդ դար, գերմանական գրականություն, վեպի ձևի ու բովանդակության խնդիր, հաջորդող գործողություններ - զուգահեռ գործողություններ, գործող կերպարներ, համաժամանակայնություն

Ներածություն

«Ոգու ասպետները» վեպի առաջաբանում Կ.Գութեկովը, դիմելով իր ընթերցողին, ընթերցողի համար բացահայտում է վեպի որոշ առանձնահատկություններ. «Սիրելի՛ ընթերցող, ես քեզ հրավիրում եմ մի երկար, հեռավոր ճամփորդության: Ձինվի՛ր համբերությամբ, ամուր հիշողությամբ: Հանկարծ չհոգնե՛ս, եթե ճանապարհիդ անհաղթահարելի թվացող բարձունքներ նկատես, եթե ստիպված լինես անցնել վտանգավոր, անծայրածիր գագաթներով և կամ ճանապարհիդ հանկարծ հայտնվի մշուշոտ ամպերի մեջ» (Gutzkow, 1854/55, p. 6): Այնուհետև հեղինակը շարունակում է արդարանալ ու բացատրել, թե ինչու է իր վեպն այդքան երկարաշունչ. «.... Ինձ համար միանգամից անարդարացի վճիռ չկայացնես՝ կարծելով, թե ես իմ այս՝ գերմանական ավանդական չափանիշներին չհամապատասխանող հսկայածավալ վեպով ցանկացել եմ կրկնօրինակել ֆրանսիացիներին: Ֆելիետոն-վեպերը, ինչպես որ դրանց հիմա անվանում են Հռենոսի այն կողմում,

կամ շարունակելի-վեպերը, ինչպես որ պետք է դրանց անվանել, գրված են չափահաս երեխաների համար՝ խոստումով՝ այսօրը գեղեցիկ էր, բայց վաղն ավելի գեղեցիկ է լինելու: Ո՛չ, սիրելի՛ ընթերցող, ո՛չ: Ես, թերևս, կուզենայի, որ մեր խիստ ընթերցողները ֆրանսիացիներից ընդօրինակեին լսելու ու համբերատար ընդունելու այդ սովորությունը, բայց ինքս այդքան երկար եմ գրել, քանի որ մեծ ցանկության դեպքում էլ չէի կարող կարճ կապել» (Gutzkow, 1854/55, p. 6):

Կարլ Գուլթցկովի վերոնշյալ վեպը, որն ամփոփված է ինը հատորի մեջ, իր ընթերցողից տիտանական համբերություն է պահանջում: Այսօր այս վեպը գերմանական գրականության ամենամոռացված երկերից մեկն է դարձել՝ թե՛ ընթերցողների, թե՛ գրականագիտական շրջանակների համար: Անշուշտ, պատճառը չի կարելի փնտրել ծավալի մեջ. չէ՞ որ «Ոգու ասպետները» վեպը իր ժամանակին ամենաընթերցված գրքերից մեկն էր և ամեն մի մտավորական գերմանացու գրադարանի զարդը: Կամ, օրինակ, նույն կերպ անգլիական կամ ֆրանսիական գրականության մեջ քիչ չեն հսկայածավալ վեպերը, որոնք մինչ օրս մշտաբար են պահում ընթերցասերների հետաքրքրությունը: Ինչպես ինքը՝ հեղինակն է արդարանում առաջաբանում, վեպը երկար է ստացվել, որովհետև այլ կերպ հնարավոր չէր, և այդ ինքնախոստովանանքը առաջին հերթին ակնհայտ է դարձնում այն փաստը, որ վեպի կառուցվածքային ու բովանդակային խտությունը հեղինակի կողմից մշակված գեղարվեստական ծրագիր է: Մյուս կողմից՝ այդ նույն նախաբանում մենք ստանում ենք որոշակի հուշումներ այն մասին, որ գերմանական գրականությանը, համենայնդեպս Կ.Գուլթցկովի ստեղծագործական ժամանակափուլում, բնորոշ չէին երկարաշունչ վեպերը, որը չի կարելի ասել ֆրանսիական գրականության մասին: Միաժամանակ նշվում է, որ հեղինակը «Ոգու ասպետները» վեպով չի ցանկացել կրկնօրինակել ֆրանսիական գրականության ավանդույթները, այլ ստիպված է եղել դիմել ծայրահեղության: Այսօր Կարլ Գուլթցկովի կիրառած այդ գեղարվեստական հնարքը գրականագիտության մեջ հայտնի է որպես նորարարական փորձ, որով ծնունդ են առել ու ձևավորվել ժամանակի վեպի՝ որպես վեպի նոր տեսակի ժանրային առանձնահատկությունները, որոնց մասին էլ կխոսենք ստորև:

1851 թվականին լույս է տեսնում Կարլ Գուլթցկովի «Ոգու ասպետները» վեպի առաջին հատորը: Պատմական առումով 19-րդ դարը Եվրոպայում մեծ խմորումների, բեկումնային իրադարձությունների ու քաղաքական վայրիվերումների փուլ է: Այս վեպը, որը կանգնած է գերմանական Մինչմարտյան ու ռեալիզմի գրականության ճամփաբաժանում, բովանդակում է այդ ժամանակն իր բոլոր

դրսևորումներով: Վեպի ընթերցումը ապահովում է բազմակողմանի տեղեկատվություն Գերմանիայի պատմությունից, մասնավորապես՝ չհաջողած Մարտյան հեղափոխությունից հետո երկրում տիրող քաղաքական, սոցիալ-տնտեսական, նաև մշակութային ու կրոնական իրադրություններից: Գերմանացի ականավոր տեսաբան Պետեր Հազուբեկը, ով առաջիններից է, որ զբաղվել է ժամանակի վեպի տեսական-տիպաբանական ուսումնասիրությամբ, Կարլ Գուբեկովի «Ոգու ասպետները» վեպի հիման վրա առանձնացնում է հետևյալ բովանդակային շերտերը, որոնք պետք է ընկած լինեն ժամանակի վեպի բովանդակության հիմքում՝

1. հասարակության շերտ,
2. հոգևոր-մշակութային շերտ,
3. կրոնի և բարոյականության շերտ,
4. ռազմաքաղաքական շերտ,
5. տնտեսության շերտ:

Պ. Հազուբեկի սույն դիտարկումը, հիրավի, առանցքային դեր է խաղում ժամանակի վեպի տիպաբանական դասակարգման համար: Այս առումով Կ. Գուբեկովի վեպը լիովին համապատասխանում է վեպի ժանրի պահանջներին, քանզի, ինչպես արդեն նշեցինք, «Ոգու ասպետները» մեր առաջ բացում է 19-րդ դարակեսի Գերմանիայի համայնապատկերը: Ի պատիվ հեղինակի պետք է նշել, որ նրան հաջողվել է իրականորեն ներկայացնել իր ժամանակը, և մեզ համար այսօր լիովին ընկալելի են դառնում այն պայմանները, որում ապրում էին Գուբեկովն ու իր ժամանակակիցները, ավելին՝ մենք վեպի հերոսների հետ վերապրում ենք այն հիասթափությունն ու անզորությունը, որ տիրում էր հետհեղափոխական գերմանական հասարակության մեջ: Մյուս կողմից, սակայն, հենց այդ նույն իրապաշտությունն ու ժամանակը իր բոլոր դրսևորումներով ցուցադրելու հախուռն պահանջը, կարծում ենք, խիստ տիպական են դարձրել հեղինակի կերտած գեղարվեստական աշխարհը. այսօր այդ աշխարհը, մեզանից ավելի քան մեկ հարյուրամյակ ժամանակային հեռավորության վրա գտնվելով, խզել է կապը մեր իրականության հետ, ուստի նաև նվազ արդիական է դարձել: Ցավոք, պետք է արձանագրենք, որ «Ոգու ասպետները» վեպը, չնայած իր բարձր գեղարվեստականությանը, այնուամենայնիվ, կորցրել է իր գեղագիտական հմայքը: Կարծում ենք, որ քաղաքական կամ պատմական վեպերն այդ առումով ժամանակի վեպի «բախտակիցներն» են, քանի որ վեպի այդ տեսակների բովանդակության հիմքում ընկած են պատմական կամ քաղաքական դրվագներ, որոնք որոշ ժամանակ անց կարող են ժամանակավրեպ դառնալ: Սակայն, ի տարբերություն ժամանակի վեպի՝

վեպի նշված տեսակները, որպես կանոն, պատմում են որևէ ուշագրավ պատմական կամ քաղաքական իրադարձության մասին, իսկ այդ վեպերում գլխավոր գործող անձինք իրական կերպարներ են՝ մարդկության պատմության մեջ հայտնի դեմքեր, և արձակում նրանց գեղարվեստական վերակենդանացումը երկի հանդեպ բարձր հետաքրքրվածություն է ապահովում: Ժամանակի վեպը խիստ ներծծված է պատմության ու քաղաքականության թեմաներով, սակայն այստեղ գործող կերպարները հասարակ մարդիկ են, հեղինակի երևակայությամբ ծնունդ առած մտացածին հերոսներ: Հաճախ հեղինակը կարող է գործող կերպար դարձնել հայտնի քաղաքական, հասարակական կամ մշակութային անձի, որը, սակայն, գեղարվեստական շղարշով ծալված է, և միայն պատմությանը քաջատեղյակ ընթերցողը կարող է գլխի ընկնել, թե ով է թաքնված այս կամ այն կերպարի հետևում: Հատկապես Կարլ Գուլթկովի մոտ շատ են իր ժամանակի մեջ հայտնի մարդկանց նախատիպերը: Այնուամենայնիվ, «Ոգու ասպետները» վեպում անվանապես չենք հանդիպում հայտնի պատմական դեմքի, փոխարենը շատ են հասարակության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչները: Ինչպես արդեն նշվեց, «Ոգու ասպետներ»-ի աշխարհը մեզ համար փոքր-ինչ օտարոտի է դարձել, և մենք կարծում ենք՝ դա է առաջին պատճառը, որ այդ ստեղծագործությունն այսօր այլևս արդիական չէ: Եվ այստեղ մենք բախվում ենք ժամանակի վեպի խնդրին, քանզի հարց է առաջանում, թե ինչպես է պատահել, որ Թեոդոր Ֆոնտանեի «Շթեխլին» ժամանակի վեպը, որը նույնպես պատկերում է 19-րդ դարի Գերմանիայի ժամանակն իր բոլոր շերտերով հանդերձ, ոչ միայն չի կորցրել իր արդիականությունը, այլև տարիների ընթացքում ավելի ու ավելի է սիրվում ընթերցողների կողմից: Թ. Ֆոնտանեի հերոսները, որոնք շատ տիպական են որպես 19-րդ դարի Գերմանիայի հասարակության անդամներ, միաժամանակ նաև անհատականություններ են՝ չկրկնվող, ամեն մեկը յուրովի ներաշխարհի ու դիմագիծ ունեցող, հաճախ նաև անսպասելիորեն արտասովոր, իրենց սոցիալական դիրքի ու կոչումի շրջանակներից դուրս եկող: Բավական է հիշել հենց միայն քահանա Լորենցենի կերպարը, որի սենյակում Տիրամոր նկարի կողքին կախված է օպերային երգչուհի Ջեննի Լինդի դիմանկարը: Կարլ Գուլթկովի կերպարները մեզ չեն շփոթեցնում իրենց արտասովորությամբ, նրանցից ամեն մեկը հասարակության շղթայի մի մասն է, այնպիսին, ինչպիսին որ պետք է լինեն: Գերմանացի գրականագետ Յոախիմ Վորթմանը կարծում է, որ. «Անհատի ճակատագիրը ու ժամանակն իր բազմակողմանի պատկերի մեջ միատեղելը «ժամանակի վեպի» հիմնական խնդիրն է: Վտանգ կա, որ վեպը մի դեպքում կարող է արտացոլել ինքնին հետաքրքիր, բայց

պատահական ու ժամանակից կտրված որևէ հերոսի կենսափորձի նկարագրությունը և արդյունքում բաց թողնել ժամանակի գործոնը, մյուս կողմից, սակայն, վեպը կարող է գործողությունների ու կերպարների խիստ տիպականացմամբ դառնալ կանոնիկ ու կորցնել գեղարվեստականությունը» (Worthmann, 1974, p. 14): Ինչպես տեսնում ենք, «Ոգու ասպետները» վեպի դեպքում գործել է երկրորդ տարբերակը, և ինչին մենք ևս անդրադարձել ենք:

Սույն հոդվածի հիմքում, սակայն, ընկած է ոչ այնքան «Ոգու ասպետները» վեպի գեղարվեստականության խնդիրների, որքան նույն վեպում տեղ գտած ստեղծագործական նորարարությունների վերհանումը, որոնք որոշիչ են դարձել ժամանակի վեպի՝ որպես առանձին վեպի տեսակի ձևավորման և զարգացման հարցում:

Ժամանակի վեպը, սկիզբ առնելով 19-րդ դարի գերմանական գրականությունից, տարբերակվում է որպես վեպի առանձին տեսակ, որի հիմքում ընկած է իր հեղինակի կենդանի ժամանակը: Մինչ օրս վեպի այդ տեսակը համարվում է բացառապես 19-րդ դարի գերմանական գրականության երևույթ, թեև ժամանակի վեպի օրինակներ կան նաև 20-րդ դարում, ինչպես Թ. Մանի «Կախարդական լեռը» կամ Ռոբերտ Մուզիլի «Մարդն առանց հարկությունների» երկերը: Ախիմ ֆոն Արնիմի «Դոլորես կոմսուհին» վեպը ընդունված է համարել այս տեսակի մեջ առաջինը: Այս, ինչպես նաև Բիդերմայերի շրջանի ժամանակի վեպերը՝ Լյուդվիգ Թիքի «Երիտասարդ հյուանը» ու Կարլ Լեբեղեշթ Իմերմանի «Հետնորդները» վեպերը, ընդհանուր առմամբ հարում են գերմանական ուշ ռոմանտիզմի ավանդույթներին:

19-րդ դարի 40-ից 50-ական թվերին Գերմանիայում ընթացող քաղաքական, սոցիալ-տնտեսական փոփոխությունների ֆոնին սկսում է ձևավորվել «Երիտասարդ Գերմանիա» գրական շարժումը, որի առաջնորդն էր Կարլ Գուլթկովը: Նշենք, որ գրականության քաղաքականացումը, որը սկսվել էր դեռևս ուշ ռոմանտիզմից, առավել ակնառու է երիտգերմանական գրականության ներկայացուցիչների ստեղծագործություններում: Կարլ Գուլթկովը հեղափոխական գրողների առաջատարներից էր, որոնք հույս ունեին իրենց գրչով տարածելու ֆրանսիական Մեծ հեղափոխության արժեքներն ու ճանապարհ բացել դեմոկրատական բարեփոխումների համար: Ինչպես հուշում է պատմությունը, Մարտյան հեղափոխությունը տապալվեց, ու Գերմանիայում այդքան սպասված քաղաքացիական բարեփոխումները տանուլ տվեցին: Պայքարի ու խանդավառության, ապա նաև հիասթափության ու անզորության տրամադրությունները, որոնք տիրում էին հետհեղափոխական Գերմանիայի հասարակության մեջ, մտնում են

երիտգերմանական գրականության մեջ՝ «<Ետնորդներ»-ից մինչև «Ոգու ասպետներ»։ Կարլ Գուլթկովը՝ որպես երբեմնի հեղափոխական, իր իրականության մեջ անկատար մնացած պայքարը շարունակում է մտացածին աշխարհում, և նրա հերոսները ստեղծում են «Ոգու» դաշինք, իրենց հոշակում այդ դաշինքի ասպետներ։ Նրանց միավորում է մեկ գաղափար՝ ծառայել մարդկության բարօրությանը հանուն Ոգու և Գաղափարի։ Եթե Ախիմ ֆոն Արնհիմը կամ Կարլ Իմմերմանը իրենց ժամանակը քննադատում էին ավելի շատ պահպանողական դիրքերից ու անցումային այդ շրջափոխի ավելի շատ անցյալի գեղագիտությունն էին հակադրում որպես պոեզիայի, մարդկային պարզ ու անշահախնդիր հարաբերությունների տիրույթ, ապա «Երիտասարդ Գերմանիա» գրական շարժումը ներկայի խնդիրները փնտրում էր ապագայի տեսլականում։ Այդ միտումը շարունակվում է նաև սոցիալ-լիբերալիստական «ժամանակի վեպում»՝ ի դեմս Գուստավ Ֆրայթագի «Պարտք ու պահանջ» վեպի, իսկ այնուհետև արդեն գեղարվեստական ռեալիզմի (poetischer Realismus) արձակում։ Այստեղից կարող ենք եզրահանգել, որ Կարլ Գուլթկովը՝ որպես երիտգերմանական հեղափոխական գրականության առաջնորդ, առաջիններից է, որ խզում է կապերը ռոմանտիզմի ավանդույթից ու տեսական հիմքեր է ստեղծում ռեալիստական ժամանակի վեպի համար։ Բացի գաղափարական նորարարությունից՝ Կարլ Գուլթկովը ժամանակի վեպի ձևաբովանդակային խնդրի նոր լուծում է առաջարկում, որը դառնում է հաջորդող մյուս բոլոր ժամանակի վեպերի նախատիպը. «Նախկինում վեպը ...արիեստականորեն *իրար հաջորդող իրարաբաժնությունների (Roman des Nacheinanders)* ամբողջություն էր։ Այդ շքեղ վեպերը, որ անհավատալիությամբ միշտ դասական էին։ Այդ չքնադ, գունազեղ պատկերները, որ կամայնականորեն ներկայացնում էին կեղծը, անհնարինը, պայմանականությունները» (Gutzkow, 1854/55, p. 8)։ Այսպես Գուլթկովը հրաժեշտ է տալիս ավանդական գերմանական վեպին ու առաջարկում վեպի նոր տեսակ, որը ավելի շատ է համապատասխանում ժամանակի պահանջներին. «Նոր վեպը *գուլաշեն պարունով (Roman des Nebeneinanders)* վեպն է։ Ահա մեր առջև բացվում է մի ամբողջ աշխարհ։ Այստեղ իրար են հանդիպում թափառաշրջիկ մուրացկանն ու թագավորը։ Մարդիկ, որոնք պատմվող պատմության մի մասն են կազմում և մարդիկ, որոնք միայն անդրադարձնող լույս են նետում այդ պատմության վրա... Այն, ինչ գրողը ուզում է ասել, ներկայացնել, հաճախ հենց այն է, ինչ նրա երկու պատմությունների միջև առաջ է գալիս որպես երրորդ պատմություն, որը ընկած է մեջտեղում... Կյանքն իր ամբողջական, լրիվ պատկերով փոված է մեր առջև» (Gutzkow, 1854/55, p. 19)։ Ինչպես տեսնում ենք, Կարլ Գուլթկովը տեսականորեն

փորձում է լուծել ժամանակի վեպի խնդիրը, և դրա համար նա դիմում է կտրուկ քայլերի. նրա վեպը մեկ հերոսի կյանքի պատմություն չէ, այլև մի քանի, «Ոգու ասպետների» դեպքում հարյուրավոր հերոսների պատմություն: Կ. Գուլթցկովը վստահորեն քանդում է գլխավոր հերոսերկրորդական կերպարներ աստիճանակարգը, իսկ դա հստակ ազդակ էր 19-րդ դարի գերմանական հասարակության մեջ ընթացող վերադասավորումներին. դասակարգային բուրգի փլուզումն արդեն անկասելի գործընթաց էր, քանզի ագրարային տնտեսությունից զարգացած արդյունաբերական տնտեսության անցումը նախադրում էր խաղի նոր կանոններ, որտեղ օր օրի աճում էր բուրժուա դասակարգի հեղինակությունը, թեև ազնվական դասը դեռևս շարունակում էր կարծել, որ ինքն է պայմաններ թելադրում: Կ. Գուլթցկովին հաջողվել է շոշափել իր ժամանակի զարկերակը և ճիշտ ազդակներ ուղարկել: Նրա վեպում կողք-կողքի գործում են հասարակության բոլոր շերտերի ներկայացուցիչներ՝ իշխանից մինչև հասարակ բանվոր, և նրանցից յուրաքանչյուրը առանցքային դեր ունի վեպում, կարող ենք ասել՝ նրանցից ամեն մեկն իր հերթին գլխավոր հերոս է: Կ. Գուլթցկովի կերպարները պատկերված չեն ըստ առաջնայնության, առավել ևս ըստ իրենց սոցիալական դիրքի: Ժամանակի վեպի տեսաբան Էու Չուն-Պարկը առաջ է քաշում այն միտքը, որ. «Ժամանակի վեպը ընդհանրապես պետք է ընդունել որպես դեմոկրատական առաջադեմ գրականությանը պատկանող վեպի ձև» (Park, 1997, p. 11): Թեև Է. Չուն-Պարկը այս դիտարկումը կատարում է Թեոդոր Ֆոնտանեի ժամանակի վեպերի վերլուծության հիման վրա, մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ գրականության դեմոկրատացման սկիզբը պետք է փնտրել հենց Կ. Գուլթցկովի ժամանակի վեպում, քանզի «Ոգու ասպետները» առաջին վեպն է, որտեղ հեղինակը հավասարապես գործելու հնարավորություն է տալիս հասարակության բոլոր շերտերի անդամներին՝ առանց գլխավոր հերոսերկրորդական կերպար աստիճանակարգային տարանջատման: Այս հնարը, որը Կ. Գուլթցկովը անվանեց *զուգահեռ պատում*, բացի կերպարների ներգրավվածության տեխնիկայից, առաջարկում էր ևս մեկ նորարարություն. խոսքը համաժանակայնության մասին է, երբ վեպում ժամանակը ընթանում է զուգահեռ հարթությունների վրա: Ի՞նչ է սա նշանակում: Եթե դասական վեպում պատումը ընթանում է մեկ գծով, ու ժամանակը զարգանում է սյուժեի հետ, ապա «Ոգու ասպետներ»-ում ժամանակը մի պահ կարող է կանգ առնել ու կրկնվել նույն կետից, այս անգամ մեկ ուրիշ սյուժեի մեջ: Ստացվում է այնպես, որ նույնիսկ մի ամբողջ գլխում զարգացումները ընդհամենը մի քանի օրվա մեջ են կատարվում, որովհետև հեղինակը հատ-հատ կենտրոնանում է մեկ այս,

մեկ մյուս հերոսի վրա ու պատմում է այն մասին, թե ինչ էր կատարվել, օրինակ, իշխան էգոնի հետ, երբ մյուս քաղաքում ապրող գաղտնի խորհրդականի կին Փաուլինեն այ նույն պահին դավեր էր նյութում վերջինիս դեմ: Որպես կանոն վեպի այդ առանձին հատվածները միանում են «Իսկ այդ ժամին», «Այդ ժամանակ», «Նույն պահին» և այլ ժամանակի մակբայներով կամ շաղկապներով: *Ինչպես տեսնում ենք, Կարլ Գութկովը «օդում ճախրող արծվի դիրքերից» (Gutzkow, 1854/55, p. 9) փորձում է մեկ համայնապատկերի մեջ հավաքել իրար հետևից ընթացող դեպքերը, և ժամանակը, կարծես, տրոհվում է տարածության մեջ: Բայց այդ ժամանակը շատ խտացված է, և վեպի ծավալը խնդիրներ է առաջացնում պատումի նյութը սյուժեի մեջ ներգրավելու համար: Հեղինակը, որը տեսականորեն մերժում էր արկածային գրականությանը հարիր հորինվածքը, կիրառում է ռոմանտիզմի խորհրդավորությանը բնորոշ, երբեմն նաև դետեկտիվ հնարքներ, որպեսզի կարողանա իրար կցել վեպի՝ այդչափ սփռված գործողությունները: Արդյունքում «Ոգու ասպետները» վեպը պատկերանում է ուտոպիստական լույսի ներքո, ինչը, անշուշտ, խաթարում է վեպի ռեալիստական դիմագիծը:*

Եզրակացություն

Կ. Գութկովի «Ոգու ասպետները» վեպի վերլուծությունը մեզ ցույց տվեց, թե որքանով են արդիական հեղինակի կողմից մշակված գեղարվեստական հնարքները ժամանակի վեպի ժանրային-տիպաբանական ուսումնասիրության համար: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ Կ. Գութկովի բազմազանության վեպը, մասնավորապես *գուգահեռ պատումի* տեխնիկան, նախատիպ է եղել ռեալիզմի գրականության ժամանակի վեպի համար, քանի որ դեռևս Ախիմ ֆոն Արնիմից ծնունդ առնող վեպի այդ տեսակի ժանրային-տիպաբանական զարգացումը սկսվում է հենց Կ. Գութկովի տեսությունից, այն է՝ մեկ գլխավոր հերոսից հերոսների խմբի անցումը, որոնք չեն դասվում գլխավոր-երկրորդական կերպարներ աստիճանակարգի մեջ, ինչպես նաև համաժամանակյա ընթացող գործողությունների կիրառումը՝ որպես ներկա ժամանակը իր ողջ համայնապատկերի մեջ ներգրավելու միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Gutzkow, Karl: Die Ritter vom Geiste. Roman in 9 Büchern. 3. Auflage, Bd. 1-9, Leipzig 1854/55
2. Hasubek, Peter: Der Zeitroman. Ein Romantypus des 19. Jahrhunderts. In: Vom Biedermeier zum Vormärz. Arbeiten zur deutschen Literatur zwischen 1820 und 1850. Peter Lang Verlag, Frankfurt am Main 1996

3. Hasubek, Peter: Karl Gutzkows Romane „Die Ritter vom Geiste“ und „Der Zauberer von Rom“. Studien zur Typologie des deutschen Zeitromans im 19. Jahrhundert. Diss.Phil. Hamburg 1964
4. Park, Eue-Choon: Fontanes Zeitromane. Zur Kritik der Gründerzeit. Peter Lang Verlag, Düsseldorf 1997
5. Worthmann, Joachim: Probleme des Zeitromans. Studien zur Geschichte des deutschen Romans des 19. Jahrhunderts. Carl Winter Universitätsverlag, Heidelberg 1974

АРМИНЕ МКРТЧЯН - РОМАН КАРЛ ГУЦКОВА "ДУХОВНЫЕ РЫЦАРИ" НА ФОНЕ НЕМЕЦКОЙ ЛИТЕРАТУРЫ XIX ВЕКА

Ключевые слова: *“роман времени”, немецкая литература XIX века, проблемы формы и содержания, роман преемственности и сопоставления, одновременность*

Настоящая статья посвящена анализу исторического романа Карла Гуцкова "Духовные рыцари". В центре внимания статьи - выделение особенностей нарративной техники Гуцкова, а именно – техники противопоставления и функционирования иерархии второстепенных персонажей и главного героя. Посредством анализа было продемонстрировано, что эта новаторская повествовательная техника стала ориентиром для “романов времени” более позднего периода.

ARMINE MKRTCHYAN - KARL GUTZKOW'S NOVEL "DIE RITTER VOM GEISTE" IN THE CONTEXT OF THE 19TH CENTURY GERMAN LITERATURE

Keywords: *novel of the period, German literature of the 19th century, problems of form and content, the novel of succession and juxtaposition, simultaneity.*

The article is devoted to the analysis of Karl Gutkyow's novel "Die Ritter vom Geiste". The focus of the article is to highlight the characteristics of Gutzkow's narrative technique, namely the technique of juxtaposition and the triggering of the main hero - supporting characters hierarchy. We have highlighted through analysis that this innovative narrative technique has become a reference point for later period novels.

Ներկայացվել է՝ 10.04.2023 թ.
Գրախոսվել է՝ 14.04.2023 թ.